

4. 2. Ապրանքների արտահանում և ներմուծում

4.2.1. Արտաքին առևտուր

Արտաքին առևտրաշրջանառությունը և աշխարհագրությունը: ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-սեպտեմբերին, փաստացի գներով, կազմել է 453374.3 մլն. դրամ կամ 845.2 մլն. դոլար, այդ թվում՝ ապրանքների արտահանումը՝ 113841.5 մլն.դրամ (212.3 մլն.դոլար) և ներմուծումը՝ 339532.7 մլն. դրամ (632.9 մլն.դոլար): Առևտրային հաշվեկշիռը բացասական է 225691.2 մլն.դրամով (420.6 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնության կարգով ստացված բեռների՝ 198068.7 մլն. դրամով (369.0 մլն. դոլարով):

2000թ. հունվար-սեպտեմբերին 1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատությամբ արտաքին առևտրաշրջանառության ծավալն աճել է 13.6%-ով: Ընդ որում, արտահանումն աճել է 22.5%-ով, իսկ ներմուծումը՝ 10.9%-ով: Բացասական առևտրային հաշվեկշիռն աճել է 5.9%-ով: Արտահանման ծավալը 2000թ. սեպտեմբերին օգոստոսի նկատմամբ նվազել է 15.5%-ով, իսկ ներմուծումը՝ 0.8%-ով:

◇ **Ծանոթություն:** Ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, 2000թ. հունվար-սեպտեմբերի տվյալների բազայում (ՀՀ պետեկամուտների նախարարությունից ստացված տեղեկատվության հիման վրա) կատարվել է նախորդ ամիսների տվյալների ճշգրտում, որի մասին տեղեկատվությունը ներկայացվում է ստորև.

2000թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին արտահանման և ներմուծման ճշգրտված տվյալներն ըստ ամիսների

հազ.ԱՄՆ դոլար


	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր
Արտահանում	14777.0	19852.5	24110.7	23098.8	31702.3	26621.2	20046.1	28227.6	23864.4
Ներմուծում	58916.0	66704.4	75644.4	78908.4	94571.0	61771.6	56903.4	70033.6	69445.2

2000թ. հունվար-սեպտեմբերին ԱՊՀ երկրների հետ արտաքին ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 94556.7 մլն.դրամ (176.9 մլն.դոլար) կամ ընդհանուր ապրանքաշրջանառության 20.9%-ը (1999թ. հունվար-սեպտեմբերին՝ 23.9%), իսկ այլ երկրների հետ՝ 358817.5 մլն. դրամ (668.3 մլն. դոլար) կամ 79.1%-ը (1999թ. հունվար-սեպտեմբերին՝ 76.1%), որից Եվրոմիության(ԵՄ) երկրների հետ՝ 164846.0 մլն. դրամ (307.7 մլն. դոլար) կամ 36.4%-ը (1999թ. հունվար-սեպտեմբերին՝ 34.2%):


2000թ. հունվար-սեպտեմբերին ԱՊՀ երկրներ են արտահանվել 27028.8 մլն. դրամի (50.4 մլն. դոլարի) և ներմուծվել՝ 67527.9 մլն.դրամի (126.5 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 40499.1 մլն. դրամով (76.1 մլն. դոլարով): Նույն ժամանակաշրջանում այլ երկրներ են արտահանվել 86812.7 մլն.դրամի (161.9 մլն.դոլարի), իսկ ներմուծվել՝ 272004.8 մլն. դրամի (506.4 մլն.դոլարի) ապրանքներ: Առևտրային հաշվեկշիռը բացասական է 185192.1 մլն. դրամով (344.5 մլն.դոլարով):

1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատ 2000թ. հունվար-սեպտեմբերին ապրանքների արտահանումն ԱՊՀ երկրներ աճել է 24.7%-ով: Արտահանումը դեպի այլ երկրներ աճել է 21.8%-ով: Ներմուծման ծավալը ԱՊՀ երկրներից նվազել է 8.2%-ով, իսկ այլ երկրներից աճել է՝ 17%-ով:

Արտահանման և ներմուծման ծավալները 1999 և 2000թթ. հունվար- սեպտեմբերին, ըստ ԱՊՀ և այլ երկրների
Արտահանում (մլն. դոլար)



Ներմուծում (մլն. դոլար)



Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ առանձին երկրների

Երկրի անվանումը	ԱՐՏԱՅԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Առևտրային հաշվեկշիռը, հազ. \$
	Արժեքը		Տեսակ. կշիռը	Արժեքը		Տեսակ. կշիռը	
	մլն. դրամ	հազ. \$		մլն. դրամ	հազ. \$		
ԸՆԴԱՄԵՆԸ	113841.5	212300.6	100.00	339532.7	632898.0	100.0	-420597.45
որից՝							
ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐ	27028.8	50397.8	23.74	67527.9	126468.8	19.98	-76071.05
այդ թվում՝							
Ռուսաստան	16354.8	30399.2	14.32	52492.2	98359.2	15.54	-67960.00
Թուրքմենստան	2815.9	5226.3	2.46	449.3	840.1	0.13	4386.20
Վրաստան	5172.7	9740.6	4.59	8893.5	16632.9	2.63	-6892.37
Բելոռուս	330.2	615.0	0.29	227.7	426.1	0.07	188.88
Ուկրաինա	1319.4	2482.1	1.17	4416.0	8243.4	1.30	-5761.27
Ղազախստան	374.2	697.9	0.33	394.9	738.9	0.12	-41.01
ԱՊՀ այլ երկրներ	661.6	1236.6	0.58	654.3	1228.1	0.19	8.52
ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐ	86812.7	161902.8	76.26	272004.8	506429.2	80.02	-344526.40
այդ թվում՝							
ԵՄ երկրներ	44739.2	83548.6	39.35	120106.8	224176.2	35.42	-140627.67
Ավստրիա	2.4	4.5	0.00	821.3	1540.4	0.24	-1535.94
Բելգիա	32656.1	61001.4	28.73	36557.6	68278.8	10.79	-7277.36
Ֆրանսիա	200.7	372.3	0.18	5974.6	11161.1	1.76	-10788.74
Գերմանիա	4857.8	9072.7	4.27	13788.3	25732.0	4.07	-16659.32
Իտալիա	969.8	1810.3	0.85	10063.3	18782.3	2.97	-16972.01
Նիդեռլանդներ	747.9	1390.5	0.65	5924.3	11107.9	1.76	-9717.38
Սեժ Բրիտանիա	3905.9	7299.9	3.44	20532.0	38270.1	6.05	-30970.19
Հունաստան	1353.3	2512.6	1.18	21979.8	40992.5	6.48	-38479.89
Իռլանդիա	0.1	0.3	0.00	475.7	883.1	0.14	-882.85

Երկրի անվանումը	ԱՐՏԱԳՆԱՌԻՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Առևտրային հաշվեկշիռը, հազ. \$
	Արժեքը		Տեսակ. կշիռը	Արժեքը		Տեսակ. կշիռը	
	մլն. դրամ	հազ. \$		մլն. դրամ	հազ. \$		
Դանիա	0.0	0.0	0.00	603.1	1129.3	0.18	-1129.29
ԵՄ այլ երկրներ	45.2	84.0	0.04	3386.9	6298.7	1.00	-6214.69
Շվեյցարիա	3301.4	6134.9	2.89	8509.8	15796.7	2.50	-9661.82
Իրան	12038.8	22423.5	10.56	28498.5	51999.8	8.22	-29576.29
Թուրքիա	469.3	877.0	0.41	15146.1	28242.6	4.46	-27365.66
Մ.Արաբական Եմիր.	2317.6	4298.3	2.02	15047.4	28083.6	4.44	-23785.29
ԱՄՆ	10597.4	19735.7	9.30	37045.3	69123.0	10.92	-49387.36
Բուլղարիա	175.6	327.1	0.15	2976.7	5536.0	0.87	-5208.91
Այլ երկրներ	13173.5	24557.9	11.57	44674.2	83471.3	13.19	-58913.40

2000թ. հունվար-սեպտեմբերին արտահանման ծավալի 23.7%-ն ուղղվել է ԱՊՀ երկրներ (այդ թվում 14.32%-ը՝ Ռուսաստանի Դաշնություն, 4.59%-ը՝ Վրաստան և 4.8%-ը՝ ԱՊՀ մյուս երկրներ), 76.26%-ն աշխարհի այլ երկրներ, այդ թվում 39.35%-ը՝ ԵՄ երկրներ (որից 28.73%-ը՝ Բելգիա, 4.27%-ը՝ Գերմանիա, 3.44%-ը՝ Սեծ Բրիտանիա), 10.56%-ը՝ Իրան և 9.3%-ը՝ ԱՄՆ:

Ներմուծման ծավալի 19.98%-ը բաժին է ընկել ԱՊՀ երկրներին (որից 15.54%-ը՝ Ռուսաստանի Դաշնությանը), իսկ 80.02%-ը՝ աշխարհի այլ երկրներին, այդ թվում 35.42%-ը՝ ԵՄ երկրներին (որից 10.79%-ը՝ Բելգիային, 6.48%-ը՝ Հունաստանին), 10.92%-ը՝ ԱՄՆ-ին, 8.22%-ը՝ Իրանին և 4.46%-ը՝ Թուրքիային:

2000թ. հունվար-սեպտեմբերի արտահանման և ներմուծման ծավալներն ու տեսակարար կշիռներն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի¹

(ըստ բեռնամաքսային հայտարարագրերի, առանց ֆիզիկական անձանց կողմից կազմակերպված առևտրի տվյալների)

Մարզի /քաղաքի անվանում	Արտահանում			Ներմուծում		
	Արժեքը		Տեսակ. կշիռը, %-ով	Արժեքը		Տեսակ. կշիռը, %-ով
	մլն.դրամ	Հազ. \$		մլն.դրամ	Հազ. \$	
Ընդամենը	111148.2	207299.4	100.0	323238.0	602447.1	100.0
ք.Երևան	65741.5	122574.3	59.13	246413.6	459103.7	76.21
Արագածոտն	480.1	899.1	0.43	1180.4	2209.4	0.37
Արարատ	2459.7	4584.4	2.21	4798.7	8912.1	1.48
Արմավիր	304.7	566.1	0.27	2474.0	4607.4	0.76
Շիրակ	519.6	968.2	0.47	5764.2	10732.8	1.78
Վայոց Ձոր	155.9	292.5	0.14	976.9	1813.8	0.30
Տավուշ	79.8	148.1	0.07	129.7	240.4	0.04
Սյունիք	6055.8	11259.3	5.43	14971.1	27927.6	4.64
Գեղարքունիք	1050.2	1949.5	0.94	1046.6	1946.3	0.32
Լոռի	2053.7	3807.3	1.84	5218.4	9745.3	1.62
Կոտայք	32247.2	60250.4	29.06	40264.4	75208.3	12.48

2000թ.հունվար-սեպտեմբերի ՀՀ արտաքին առևտրաշրջանառության 71.8%-ը (արտահանումը՝ 59.13%, ներմուծումը՝ 76.21%) իրականացվել է Երևան քաղաքում տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից, 16.7%-ը՝ Կոտայքի մարզի, 4.8%-ը՝ Սյունիքի մարզի կազմակերպությունների կողմից: Հանրապետության մյուս մարզերում արտաքին առևտրաշրջանառության տեսակարար կշիռը չի գերազանցել 2%-ը:

¹ Այսպիսի կտրվածքով տեղեկատվություն ԱՎԾ ներկայացնում է առաջին անգամ: Պետք է նշել, որ արտահանման և ներմուծման ծավալների բաշխումը մարզերի իրականացվել է ըստ կազմակերպությունների տնտեսական գործունեության իրականացման վայրի՝ ՀՀ պետականուտմանի նախարարությունից ստացված տեղեկատվության հիման վրա:

Արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքը:

Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը 2000թ. հունվար-սեպտեմբերին, ըստ առանձին ապրանքախմբերի

	ԱՐՏԱՀԱՆՈՒՄ			ՆԵՐՄՈՒԾՈՒՄ			Հաշվե- կշիռը, հազ. \$
	Ա Ր Ժ Ե Ը Ր		Տեսակ. կշիռը, %-ով	Արժեքը		Տեսակ. կշիռը, %-ով	
	մլն.դրամ	Հազ. \$		մլն. դրամ	Հազ. \$		
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	113841.5	212300.6	100.00	339532.7	632898.0	100.00	-420597.4
այդ թվում՝							
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	268.1	497.8	0.23	12235.1	22888.5	3.62	-22390.73
Բուսական ծագման արտադրանք	775.7	1433.8	0.68	35826.0	67045.0	10.59	-65611.11
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.2	0.3	0.00	6651.1	12441.1	1.97	-12440.75
Պատրաստի սննդի արտադրանք	8668.1	16165.5	7.61	26763.2	49886.6	7.88	-33721.12
Հանքահումքային արտադրանք	13452.2	25085.6	11.82	67601.8	125273.5	19.79	-100187.89
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1369.9	2575.4	1.21	32381.6	60294.0	9.53	-57718.53
Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր	4308.6	7984.8	3.76	8308.5	15460.4	2.44	-7475.59
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	462.2	863.3	0.41	537.8	1001.3	0.16	-138.03
Փայտ և փայտյա իրեր	306.2	569.1	0.27	1921.8	3581.4	0.57	-3012.36
Թուղթ և քղթից իրեր	138.8	257.8	0.12	9330.3	17351.5	2.74	-17093.72
Մանածագործական իրեր	4892.7	9108.3	4.29	11670.0	21761.2	3.44	-12652.94
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	357.5	665.0	0.31	2002.8	3728.0	0.59	-3063.00
Իրեր քարից, գիպսից,ցեմենտից	939.7	1764.7	0.83	4196.4	7812.1	1.23	-6047.35
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	49272.3	92016.5	43.34	45111.5	84255.3	13.31	7761.20
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	17867.8	33295.4	15.68	9154.2	17052.3	2.69	16243.11
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	8624.2	16032.1	7.55	47238.4	88251.1	13.94	-72218.99
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	740.6	1385.4	0.65	9306.7	17413.4	2.75	-16028.01
Սարքեր և ապարատներ	871.2	1627.0	0.77	4801.0	8995.9	1.42	-7368.83
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	435.4	805.1	0.38	4475.2	8370.0	1.32	-7564.87
Արվեստի ստեղծագործություններ	90.0	167.7	0.08	19.1	35.6	0.01	132.08

2000թ. հունվար-սեպտեմբերին հանրապետությունից արտահանված ապրանքների ընդհանուր ծավալի 43.34%-ը կազմել են մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը, 15.68%-ը՝ ոչ թանկարժեք մետաղները և դրանցից պատրաստված իրերը (որի շուրջ 51%-ը կազմում է ոչ թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը), 11.82%-ը՝ հանքահումքային արտադրանքը, 7.61%-ը՝ պատրաստի սննդի արտադրանքը, 4.29%-ը՝ մանածագործական իրերը, 7.55%-ը՝ մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները: Ներմուծման մեջ առավել մեծ տեսակարար կշիռ են կազմել սննդի արդյունաբերության, կենդանական և բուսական ծագման արտադրանքը՝ 24.06%, հանքահումքային արտադրանքը՝ 19.79%, մշակված և անմշակ ալմաստները, թանկարժեք մետաղների ջարդոնը և թափոնը, ոսկերչական իրերը՝ 13.31%, մեքենաները, սարքավորումները և մեխանիզմները՝ 13.94%, քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերական ճյուղերի արտադրանքը՝ 9.53%:

2000թ. հունվար-սեպտեմբերին առևտրային հաշվեկշիռը դրական է միայն երեք ապրանքախմբերի գծով, հիմնականում՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից պատրաստ-

ված իրերի խմբում՝ 16243.11 հազ. դոլար, թանկարժեք մետաղների ջարդոնի և թափոնի, ոսկերչական իրերի խմբում՝ 7761.2 հազ.դոլար և արվեստի ստեղծագործությունների խմբում՝ 109.1 հազ. դոլար: Իսկ մնացած ապրանքախմբերում առևտրային հաշվեկշիռը բացասական է: Միայն սննդամթերքի գծով բացասական առևտրային հաշվեկշիռը կազմել է 134163.7 հազ. դոլար, հանքահումքային արտադրանքի գծով՝ 100187.9 հազ. դոլար:

Արտահանման և ներմուծման ծավալների աճերի տեմպերը 2000թ. հունվար-սեպտեմբերին 1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատությամբ, ըստ ապրանքախմբերի

	Արտահանում			Ներմուծում		աճի տեմպը (%)
	1999թ. հունվար-սեպտեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-սեպտեմբեր, հազ. \$	աճի տեմպը (%)	1999թ. հունվար-սեպտեմբեր, հազ. \$	2000թ. հունվար-սեպտեմբեր, հազ. \$	
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	173351.7	212300.6	122.47	570668.6	632898.0	110.90
այդ թվում՝						
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք	417.1	497.8	119.34	26873.8	22888.5	85.17
Բուսական ծագման արտադրանք	1112.3	1433.8	128.91	44029.9	67045.0	152.27
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	9.1	0.3	3.55	11255.7	12441.1	110.53
Պատրաստի սննդի արտադրանք	10367.0	16165.5	155.93	56776.4	49886.6	87.87
Հանքահումքային արտադրանք	30369.2	25085.6	82.60	128652.4	125273.5	97.37
Քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք	1230.9	2575.4	209.24	55370.5	60294.0	108.89
Պլաստմասսա և դրանցից իրեր,կաուչուկ և ռետինե իրեր	6507.0	7984.8	122.71	18388.9	15460.4	84.07
Կաշվե հումք, կաշի, մորթի և դրանցից պատրաստված իրեր	746.0	863.3	115.73	1070.8	1001.3	93.51
Փայտ և փայտյա իրեր	234.8	569.1	242.33	2706.5	3581.4	132.33
Թուղթ և թղթից իրեր	878.8	257.8	29.34	13722.5	17351.5	126.45
Մանածագործական իրեր	10718.4	9108.3	84.98	23206.6	21761.2	93.77
Կոշիկեղեն, գլխարկներ, հովանոցներ	694.6	665.0	95.74	3940.4	3728.0	94.61
Իրեր քարից, գիպսից,ցեմենտից	573.9	1764.7	307.50	9053.1	7812.1	86.29
Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր	73701.7	92016.5	124.85	63255.7	84255.3	133.20
Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր	19998.6	33295.4	166.49	19026.5	17052.3	89.62
Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ	12115.4	16032.1	132.33	51172.6	88251.1	172.46
Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ	2117.0	1385.4	65.44	26004.9	17413.4	66.96
Սարքեր և ապարատներ	1100.4	1627.0	147.85	7491.7	8995.9	120.08
Տարբեր արդյունաբերական ապրանքներ	266.1	805.1	302.52	8643.0	8370.0	96.84
Արվեստի ստեղծագործություններ	193.3	167.7	86.73	26.7	35.6	133.09

Նախորդ տարվա հունվար-սեպտեմբերի համեմատ արտահանման ծավալի աճ է տեղի ունեցել հիմնականում թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի (24.8%-ով), քիմիայի և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանքի (109.2%-ով), պատրաստի սննդի արտադրանքի (55.9%-ով), մեքենաների և սարքավորումների (32.3%-ով), սարքերի ու ապարատների (47.8%-ով) ապրանքախմբերի գծով: Միևնույն ժամանակ, 17.4%-ով նվազել են հանքահումքային արտադրանքի, 15%-ով՝ մանածագործական իրերի արտահանումը:

1999թ. հունվար-սեպտեմբերի համեմատությամբ 1.33 անգամ աճել են թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, թանկարժեք մետաղների և դրանցից իրերի, 1.5 անգամ բուսական ծագման արտադրանքի, 1.7 անգամ՝ մեքենաների և սարքավորումների, 1.2 անգամ՝ սարքերի ու ապարատների ներմուծումը: Միևնույն ժամանակ, 12.1%-ով նվազել են պատրաստի սննդի արտադրանքի, 33%-ով՝ վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցների, 10.4%-ով՝ ոչ թանկարժեք մետաղների և դրանցից իրերի, 2.6%-ով՝ հանքահումքային արտադրանքի ներմուծման ծավալները: